

Ծաշթողի պահ է, սուփրան փոած է,
Քրտնած գավաթ է, համեմ ու հաց:
Դեզի շվաքում երեխի լաց է,
Դեզին թիկնած է հարսը շիկնած...

Լուսեյակ գիշեր է, կալե կտոր է,
Կալե սափոր է, կալե գավաթ:
Լացող պրտի մեջ լավի սարսուն է,
Լավի կարոտ է, լավի հավատ...

Գաղթը մոտիկ է, բախտը հեռու է,
Հոգնած ճամփա է ու հոգնած ոտք:
Ցավի՝ անտակ, հովսը ցամաք առու է,
Խորքերը լաց են, լացը՝ աղոթք:

Այսպես է երգը... Երգը հնչում է,
Ու ներշնչվում են ցամաք ու ծով,
Մի բուն երգի մեջ ապրում, շնչում է
Անդարձ աշխարհն իր անցողարձով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԲԵՅԹ ԿՈՍԻՏԱՆԻՆ

Աշխարհի ծովը մտած դու հայոց մրմունչի
գետ,—
Պանդուստին դու տուն բերող անուշ ծոփի
նայրենի տան...

Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն՝
Հայ ժողովորդն այսպան բարձր չէր լինի,
Թե չլիներ հայ ժողովորդն աշխարհում՝
Կոմիտասն էլ այսքան բաղցր չէր լինի:

ԵՐՎԱՆԴ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ

ԶԱՅՆԻ ՀՆՁՎՈՐ, ԿՈՄԻՏԱՆ...

Հայոց աշխարհի լեռներեն դաժան
Եվ դիվարնակ մըթին կիրճերեն,
Հայոց աշխարհի դաշտերեն ցրիվ,
Վարար գետերեն, լիճերեն բյուրեն,
Առասպելատիա սուրբը սևաքեմ
— Զեռքին՝ մագաղաթ, ակո՞ս հնգագիծ—
Անխոնչ տիտանի քայլերով կանցնի,
Կշրջի անվերջ և ամենուրեք,
Մատներով լուսեղ Զայներ կինձեն...:
Ու գուրգուրանքով հնձածն այդ շքեղ
Լայն մագաղաթին վլրա ակուված
Զուգահեռներուն մեջը կամքարեն՝
Որպես գալիքին բացվող գանձարան...:

Ծիրանի ծաղկին շշունչը մեղմիկ,
Եվ ալգեկութքի խինդը երգեցիկ:

Սիրտն ըրած մագնիս՝ սրտերեն Հայոց
Լուսին կրերե, որպես վերջին գանձ,
Սիրտերն անտոնի, դնդերներն անհայոց
Սիփանա քաջաց, հավատքն հարության,
Որ դարձած աղոթք—մարդեն Մարդ—
Աստծուն—
Կիսանի երկինք՝ որպես պատարագ...

Ծուրթին՝ պատարագ, սրտին՝ սերն հողին,
Զեռքերուն սեղմած մագաղաթն իր գանձ,
Հսկան ձայնաբաղ, հսկան Կոմիտաս
Կու գա հոն ծունկի հավերժաբենակ
Օշականցին դամբանին առջն,
Եվ իր լուսագիծ մագաղաթն անձալ
Կընծայե Անոր որպես տուրք արյան.
— Դուն Հայոց երկրի բարբառին տրվիր
Հավերժին տանող ոտքեր երկարյա,
Եվ այդ բարբառին թևերուն տրվին
Երկինքներ տանող խոյանքը Զայնի...

Առաքելակերպ Սուրբը սևազգեստ
— Զեռքին՝ մագաղաթ, ակո՞ս հնգագիծ—
Կիսանի ահա դաշտերուն ցրիվ...
Մատներով կախարդ՝ կինձեն՝ Զայներ...
Ծոինչը խոյին գուղձեր ցանցընող,
Բառաչը եղին լուծին ընտանի,
Ժրափիր ծիլին արևուն բացվող
Եվ կշոռվան ալիք ցորյանի ծովին,